

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվա՝ 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:

Օտարաբարաբար զիմում են ուղղակի
Tiflis. Redaktsia „Mshak“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուի է ամեն լեզուով

Յայտարարութիւններ համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջապէս ընտրվեցաւ— և երբեք տեսու-
թիւն, Նամակ Ախալքալաքից: Նամակ խմբա-
գրին: Ներքին լուրեր: Արտաքին տեսու-
թիւն: Ֆրանսիա: «Մշակ» հեռագրներ: —
Յայտարարութիւններ: — Տեղեկացոյց: — Բանա-
սիրական: Մատենագրութիւն:

ՎԵՐՋԱՊԵՍ ԸՆՏՐՎԵՑԱԻ

Յունվարի 28-ին վերջապէս
ընտրվեցաւ Թիֆլիս քաղաքի քա-
ղաքագլուխ: Լ. Ս. Կորգանով:

Ընտրված քաղաքագլուխը մեր
կանգնողատ էր: Մեր ընթեր-
ցողները գիտեն թէ ով էր մեր
կանգնողատ: Նա մինչև անգամ
չէր բուռնակվեց:

Լ. Ս. մեծամասնութեան ըն-
տրվածի մասին, թէ և նա զեռ չէ
հաստատուել կառավարութենից,
մենք չենք կամենում ոչ վատ, ոչ
էլ լաւ ասել....

Մենք կը սպասենք թէ նա
ի՞նչպէս պետք է կատարի իր
պաշտօնը:

Մի բան միայն պարզ երևցաւ.
վերջին ընտրութիւններից, որ
Թիֆլիսի ձայնաւորները գեռ չեն
հասել զարգացման այն աստիճա-
նին որ քաղաքագլուխ պաշտօնի
համար մեր ինտելիգենցիային
պատկանող մի երիտասարդին

ընտրեն: Ի՞նչոք երիտասարդները,
որոնք քուէարկութեան ժամանակ
պ. Կորգանովի հակառակորդներ
էին, ստացան սև բուռներ....

Պ. Կորգանով յայտնի է որպէս
գործունէ մարդ, ընդունակ կա-
պալուռ, գործնական ֆինան-
սիստ,—բայց այդ չէ նշանակում
որ նա կարող է լինել ընդունակ
քաղաքային տնտես:

Լպտան ցոյց կը տայ կարող
է նա արդեօք այն լինել, ինչ որ
պահանջում էին Դ. Կրպիանց,
և որի պակասութեան պատճա-
ռով զժգոճ էին նախկին քաղա-
քագլուխը, կը լինի նա արդեօք
գործնական քաղաքագլուխ,
քաղաքային տնտես,—այդ կը
տեսնենք ապագայում:

Միայն մի բան հաստատու-
թեամբ կարող ենք ասել որ պ.
Կորգանով որպէս նախագահ,— և
մենք նրան շատ անգամ, նոյն իսկ
նորերումս Դումայի մէջ նախա-
գահելիս ասանք,— անընդունակ
է որպէս նախագահ: Դա ի հար-
կէ մեծ պակասութիւն է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Die Armenier. — Franz v. Löher (Wiener Abend-
post № 255—258 Beilage 1878) — ՀԱՅԵՐ.
Հեղ. ՖՐԱՆՑ ՖՅՆ ԼԵՈՂԷՐ

I

Վիեննայի գերմանական «Wiener Abendpost»
լրագրի անցեալ տարվայ նոյեմբեր ամսին հը-
րատարակեց չորս համարի մէջ մի երկար և շատ
հետաքրքիր յօդուած վերոյիշեալ վերնագրով:

Մենք զիտարութիւն չունենք ամբողջ յօ-
դուածը թարգմանել, բայց այն տեղերը, որոնք
ընդհանրապէս յայտնի են, ինչպէս հայոց պատ-
մութեան և գրականութեան կարճ նկարագիրը
գուրու գրելով, կաշխատենք քաղաքածք անել
կամ ամբողջութեամբ թարգմանել այն կտորնե-
րը, որոնք հնդկական իր հայեացքներ է յայտ-
նում հայոց ազգի մասին:

Ինչպէս մարդիկներ մէջ, այնպէս էլ ազգու-
թիւնների մէջ, ասում է նա, լինում են զօրա-
ղները, որոնք թէ և լաւ ծագումից էլ լինելով և
լաւ դատարարութիւն վայելած լինելով, հոգու-
ն մտաւորական հարուստ յատկութիւններով էլ
— երբեք չեն կարողանում որ և է օրինաւոր
բան արդիւնաբերել: Այդ տեսակ երկուքի պատ-
ճառը զորա մէջն է բովանդակվում, որ այդ տե-
սակ մարդիկներին, կամ աղբիւրն մի որ և է ա-
րական յատկութիւն պակաս է լինում, կամ նը-
րանց պակաս է լինում ընդհանուր քաղաքա-
ցիական յատկութիւն, կամ աշխատասիրութիւն
և տոկոսութիւն, կամ քաջութիւն և ձեռնա-
կական ոգի: Ժամանակով այդ տեսակները դառ-
նում են օտարադէմ էակներ և եթէ նրանց չէ
նպաստում բազմը, կամ յանկարծակի օգնութիւն
չէ դալիս, իրանց օտարադէմ և առանձնացած զը-
րութիւնից զուրս քաշելու համար,— այն ժամա-
նակ նրանք աւելի և աւելի կենտրոնանում են
իրանց ներքին կենքի մէջ, ծերանում են և
այնու ամենայնիւ յոյս ունեն թէ իրերի ընթաց-
քը կը փոխվի, վերադարձնելով նրանց պատի-
ւ և նշանակութիւն, և առթիւ տալով նրանց յայտ-
նազօրեղ իրանց ներքին հարստութիւնը: Այդ
տեսակ օտարադէմ, հանդարտ էակ ազգերի մէջ
հայոց ազգութիւնն է և մինչև անգամ ամենա-
զարմանալի էակներից մին: Գալիս էք դուք հա-
յերի հայրենիքը, որ կասկից և Սև ծովի մէջ
տեղ է գտնվում, հիւսիսից կովկասեան սարե-
րով, իսկ հարաւից Պարսկաստանով և փոքր-Ա-

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՎԱՐԱՐԻՑ

7 յունվարի

Մեր ուսումնարանապետական կրպակները
տարեկան եկամուտ էին բերում 1075 ռուբլու
չափ: Մեր հոգաբարձուները, կամ աւելի ճիշդ
ասել հոգաբարձուներ,— որովհետեւ երեքից մինը
իր գործով ստատիկ դառնում է, միւսը ոչինչ
չէ չինում և երեք ձեռք համար է ընտրված, մը-
նում է միայն երրորդը— շատ դժուարութիւններ
էր կրում կրպակավարները ստանալու ժամանա-
կին: Կրպակավարներից իւրաքանչիւրը նրան
հասարակաց սեփականութիւն համարելով, չէր
աշխատում ճշդապէս վճարել վարձադատը: Այժմ
որոշեց կապալով տալ այդ կրպակները:

Այդ մասին թոյլտուութիւն արդէն ստացված
է հոգևոր կառավարութիւնից: Մի անձից ստաց-
ված է 834 ռուբլ մի տարվայ առաջին քառամ-
սեակի համար, (տարեկան 2500 ռուբլու հաշուով):
Ամսին 25-ին կայացաւ այդ մասին ածրա-
խօսութիւն, և վաղը (28-ին) կը լինի կըրկ-
նածրդախօսութիւն և երեք կը մնայ վերոյիշեալ
անձի վրա: Միանգամից 1400 ռուբլու չափ մի
զուտարի աւելանալով ի հարկէ ուրախացուցիւ է
ուսումնարանի համար, բայց տեսնենք ինչ տե-
սակ կը վարվի կապալովները կրպակավարների
հետ. անկարծիք է միայն որ դրանց գինը իրանց
մաքսիմումին հասցրած կը լինին:

Այս մեր ուսումնարանի մուտքը և ծախսը
մօտաւորապէս: Մուտքը 1879 թւին: Բուռնա-
չէթու ուսումնարանից 300 ռուբլ, Մօսկվաքանկ
պ. Յովնանեանցից 150 ռ., Ս. Փրկչի եկե-
ղեցուց 50 ռ., Թոշակադրած աշակերտներից 800
ռ., ուսումնարանապետական կրպակներից 2500
ռ.: Ընդամենը 3800 ռ.: Ծախսը: 5 ուսուցիչնե-
րին և մի ուսուցչուհուն վճարվում է 1682 ռ.,
օրիորդաց ուսումնարանի բնակարանի վարձ
120 ռ., երկուսն ուսումնարանաց պահպաններից
130 ռ., վաւերիք և այլն և այլն 178 ռ.: Ըն-
դամենը 2100 ռ.: Գուրս գալով մուտքից կը մը-
նայ 1700 ռուբլ օրով կարելի կը լինի մի օրի-
նաւոր տեսուչ և մի ուսուցչի հրաւիրել: Բացի
զրանից ուսումնարանը ունի 1600 ռուբլ փող,
որը տոկոսիքը մենք չենք հաշուում, մի քանի

սխալով սահմանված, դուք կը գտնէք այնտեղ
մի աղքատի: Մէկկա, որին իւրաքանչիւր լաւ
հայր իր կենսաբան մէջ մի անգամ պէտք է անպատ-
ճառ ապցելէ: Նրանց լեզուով այդ տեղը անուան-
վում է լեյմիւն, որ նշանակում է թէ ֆրիս-
տուր այդ տեղի վրա իշաւ լոյսի ճառագայթի
ձեւով, որ յանկարծ լցրեց ազգի սուրբերի հոգին,
որպէս զի նրանք իրանց հեթանոս հայրենակից-
ներին դարձնեն զէպի իսկական կրօնը և լուսա-
ւորեն: Այն ազգը որ արժանի հանդիսացաւ այդ
տեսակ հրաշքի, դա խոր յարգանքի արժանի է:
Այստեղ հնդկական բաւական երկար խօսում է
Արարատ սարի վրա, նրա լեզունգայի վրա, ինչ-
պէս նա այժմ կայ հայոց ժողովրդի հասկացո-
ղութեան մէջ, վերջապէս թէ հայերի և թէ ու-
րիչ հին ազգերի մօտ ջրհեղեղի վրա պահված
աւանդութեան մասին:

Բայց բոլոր իրողութիւնները, աւելացնում է
հնդկականը, որոնց էթնօգրաֆիական (ազգագրա-
կան) գիտութիւնը կարողացաւ հաստատել, ճշ-
մարիտ մատնացրեց են անում այն երեկոյի վրա,
որ Հայաստանը բոլոր կովկասեան ազգերի, կամ
ինչպէս նրանց այժմ անուանում են միջերկրա-
կան ցեղերի հայրենիքն էր ամենահին ժամանակ-
ներում, որտեղ այդ ցեղերի գլխաւոր ձեւերը
միասին գեռ ևս անբաժան էին ապրում:
Հայերը իրանց հին գրքերում հաստատում
են, որ իրանց երկիրը աշխարհիս միջակէտ է,
իսկ Արարատ սարը աշխարհիս պօրտն է: Եւ
ճշմարիտ Արարատը կանգնում է երկրի ամենա-

զանգառանի պատճառով: Անկարծիք է որ ա-
մեն մէկը կը ցանկար ուսումնարանի յառաջա-
դիմութիւնը, բայց ով պէտք է աշխատի ուսու-
ցիչներ հրաւիրել, ուսումնարանը բարեկարգել:
Յուսանք որ այն անձինք, որոնք աշխատեցան
ուսումնարանի եկամուտները աւելացնել, կը հո-
գան և ուսումնարանի ապագայ դրութեան վրա:
Կայ և մի հանգամանք, այն է թէ կրպակների վար-
ձագները դուք ցանցածանա, ճանկալի էր որ այդ
կրպակները մի քանի տարով շարունակ կապա-
լով տրվէին որպէս զի հոգաբարձութիւնը կա-
րողանար գուշակել իր ապագայ եկամուտները
և ըստ այնմ վարվել: 25-ին ածրախօսութեան
միջոցին մեր աղաներից մինը դուրս է գալիս և
յայտնում է որ երեքին քաղաքային պարտեզի
մէջ գտնված մի փոքրիկ տունը, որը հոգաբար-
ձութիւնը տաս տարի առաջ գնել է և տուած
է եղել վարձով և որը այժմ կապալով տուած
կրպակների հետ է հաշված, իրն է և ուրեմն
հոգաբարձութիւնը իրաւունք չունի նրան կա-
պալով տալու: Այդ անակնկալ յայտնութիւնը
ապշեցրեց հասարակութեանը և մի քանիսը
որոնց յայտնի էր դործի եղելութիւնը, սկսեցին
հարց ու փորձ անել նրան թէ ինչ ճանապարհով
նա ձեռք է բերել այդ տունը, որի դէմ նա
պատասխանում է որ տունը իրն է և թէ հար-
կաւոր դէպքում նա իր ասածը կապացուցանէ:
Վերջապէս հոգաբարձուներից մինը բերում է
ինչեալ տան վարձագիրը որի մէջ վարձողը ստո-
րագրում է որ նա Ախալքալաքի ս. Մեսրո-
պեան ուսումնարանին պատկանած այդ տունը
վարձել է... և այլն: Այդ վարձագրի տակ վկա-
ների թւում ստորագրել է և նրա աւագ օրդին
(35—40 տարեկան): Երբ նրան նշմարեցին որ
եթէ տունը իրն է ինչպէս նրա որդին ստորագ-
րել է այդ թղթի վրա, որի մէջ պարզ ասված է
որ տունը պատկանում է ուսումնարանին, նա
պատասխանեց որ որդին ոչինչ չէ հասկանում...
Ո՛չ, այդ պարտը կամ հասարակութեանը արեւ-
մար է կարծում, որպէս թէ նրա ամեն մի ասա-
ծը հասարակութիւնը մաքուր դրամի տեղ կըն-
դունի, կամ ինքը չէ ուզում հասկանալ որ իր
որդու հասկացողութիւնը շատերի հասկացողու-
թենից գերազանց է: Այո, հայի որդին, եղբայ-
րը, ազգականները կարող են ազգէն, յիմար լի-
նել և փոխադարձաբար, նայելով թէ ինչպէս էին
պահանջում վարվել նրա շահերը: Տուն յափշ-
տակելը հնչտ բան չէ և յոյս ունենք որ շուտով

երկար գծի մէջտեղում, թէ կող չափենք: Սենե-
գալից մինչև Պէկին, կամ կապից մինչև Բերին-
գեան անցքը: Ուրիշ մէջտեղում կանգնած է
առասպելական սարը, երկու ամենամեծ ուղ-
կանոսների մէջ, և երկու ամենամեծ անա-
պատների մէջ: Այդ բանի մէջ համոզվելու հա-
մար բաւական է մի գլոբուսի վրա նայելու:
Բայց որտեղից այդ իմանում էին հին Հա-
յաստանի գիտնականները, Բնական է, որ Արա-
րատի հետ, հին ժամանակներում բոլոր յայտնի
սարերից այդ ամենագեղեցիկ և ամենաբարձր
սարի հետ, որ ինչպէս մի երկնային սին 16,000
ոտնաչափ բարձրութեամբ առանձնացած է կան-
գնում, կարող էին ամեն տեսակ վերացական
գաղափարներ և աւանդութիւններ կապել: Բայց
այնու ամենայնիւ այդ բոլոր լեզունգայների մի-
ջից թափանցում է և մի իստակ պատմական
ճշմարտութիւն, Հայաստանը դեռ մեր պատ-
մութեան սկզբներում քաղաքակրթական երկիր
էր, որ անուշը էր տալիս արեւմտեան Ասիայի
բոլոր ազգերին: Այդ հաստատում է և ասորա-
կան արձանագրութիւններով, որոնք մեր ժամա-
նակներում գտնվեցան ստորին Եփրատի կողմե-
րում: Այդ վերջին երկրորդի քաղաքակրթու-
թիւնը ոչ թէ տեղական մի ազգից, քաղաքա-
ցիներից ծագեց, այլ նոյն իսկ այդ ազգը դո-
յացաւ տեղական մի ազգի մի այլ, աւելի բարձր
քաղաքակրթութիւն ունեցող ազգութեան հետ,
որ Հայաստանի բարձրութիւններից, որոնցից
Եփրատ և Տիգրիս գետերը իրանց սկզբն են

կը յայտնվի ճշմարտութիւնը: Երբ որ այդ պարտքին ասում էին, որ այդ կիսաքանդ տունը հինգ բուրջ էլ չարժէ, նա ասում էր որ հինգ բուրջով ուսումնարանը չի առաջանայ. բայց հարցնենք պարտքից եթէ մեզանց իւրաքանչիւրը ուսումնարանի փողերից հինգ հինգ բուրջ սեփականացնէ, ուր կը մնայ վերջինիս զրու- թիւնը: Եւ... Քննա չունի, դա էլ միթէ հանգա- մանքնեքից օգուտ քաղել չէ:

Անցեալ օր այստեղ մեռաւ մի կին թողնելով իր եօթը որդիքը: Ինչպէս պատմում են դա իր ամուսնու բռնաւորութեան զոհն է: Գա ունե- ցել է բաւականին շարժական և անշարժ կա- ռածքներ հօրից ժառանգած, որոնց նրա ամու- սնին համարեա բոլորը վառնել է: Նրա 14—15 տարեկան որդին կամենում է (որպէս թէ) դա- ղատուի: Եւ անշարժ ինչ կեանքի մասին, հայրը տեղեկանում է և մի օր քիչ է մնում որդուն խեղդի:

Մայրը և քորերը օգնութիւն են հասնում պատանուն, ազատում են նրան, բայց իրանք ևս մի լաւ ծեծ են ուսում: Կինը այդ օրից հիւան- ղանում է և այդ միջոցին մի աղջիկ է ծնում: Մի շաբաթից ետքը նա մեռնում է: Եւ որքան քամաղդ մայրն տարածած գերեզման են մըտ- նում բռնաւոր ամուսինների պատճառով: Հայ տղամարդերից շատերը մի քանաւոր են իրանց գերեզմանների մէջ, իսկ նրանց կիները մարտի- բուսներ: Ի՞նչ անէ որդիքի կինը. նա ինչ- նորոյն աշխատանքով պարել չէ կարող և իր ամուսնու հետ կապուած է համարում անխելի- կապով: Տղամարդը իր բոլոր ունեցածը—որը այն օրից երբ նա կին և որդիներ ունի միայն իրան չէ պատկանում,—վառնում է և մի գե- ղեցիկ օր թշուառ գերեզմաններ առանց կտոր հացի կը մնայ: Անա ինքնուրոյն աշխատանքի բացակայութեան վատ հետեանքները: Հայը դեռ չէ սովորել վաղէկ իր կնոջ հետ իբրեւ իր հա- տաւորի հետ, այլ նա մի ինչ որ ստոր և փիղի- քապէս անդարձացած էակ է համարում նրան. Կինը ընտրելու միջոցին նա չէ գրգռած ազնիւ նպատակներ, այլ նրան բոտ մեծ մասին մը- ղում են ամուսնանալու անասնական հանոյքնե- րի հարկաւորութիւնը և այն որ կարգ է, մեղա- նից մեծերը ամուսնացել են և մենք ևս պէտք է ամուսնանանք:

Ուրեմն ընդ է ամուսնութեան լծի ծանրու- թիւնը զգացողը: Շատ չեն գտնով մեր մէջ ան- ճինք որ ձեռքերը ստորի վրա դնելով կարողա- նային ասել, որ նրանք բարեխղճաբար կարողա- ցել են կատարել իրանց պարտականութիւնները զէպի իրանց կինը և որդիքը:

Հայ կինը ոչնչով չի համաձայնի դնալ դա- տաստանաբանքը և զանգատել իր ամուսնու վրա, որին թագ ու պատկն է անուանում, մա- նաւանք որ նա, ինչպէս ասացինք, անխելի կա- պելով կապուած է համարում նրա հետ: «Լա- թէ վատ իմ ամուսինն է նա, իմ որդիքանց հա- րը»,—ասում է նա և հնազանդութիւն իր դառն ճակատագրին:

Առնում, ինչեւից նուաճեց այդ երկիրները: Ան տարակոյս մի ազգ որ այդքան հին ծագումից է, որ ծագումը է մարդկութեան օրօրոյն տեղից, որ մարդկութեան սկզբելուց նորա ամբողջ պատ- մութեան ընթացքում պահպանվել է մի և նոյն տեղում, այդ տեսակ ազգ մի քանի անգ անգ անգ է լինի, մի ազգ առանձին ազնիւ տեսակի: Միթէ այդ տեսակ ազգին վիճակված չէ մի նշանակու- թիւն, մի կոչում: Հայերը այդ բարձր չեն ար- տասանում, բայց երբ որ նրանց միտքը զբաղ- վում է վերեւ յիշված աւանդութիւններով, երեւի նրանք այդ մասին մտածում են:

Հնամարիտ է պատմութեան և ներկայի իրողու- թիւնները սաստիկ հարուածել և հարուածում են այդ ազնուապետական ազգը. այն, իրողու- թիւնները այնքան պատուել և նսեմացրել են հայերի փառքը, որ այդ ազգից շատ չէ մնացել այժմ: Հայերը այլ ևս չեն կազմում մի խիտ կերպով բնակվող ազգ, այլ ցրված են ամբողջ երկրագնդի երեսի վրա: Բայց ազգի մեծամաս- նութիւնը դեռ ապրում է իր հայրենիքում և պարագլուծ է երկրագործութեամբ և խաշնարա- ծութեամբ: Թիւրքիայում նրանք ապրում են թէ քարեայ և թէ գետնափոր խրճիթներում անա- տունների հետ միասին, վարում են մի որդիքի կիսանք միշտ ահ ու դողի մէջ քուրդերից և այլ կողոպտիչ ցեղերից: Նրանց քաղաքները աւե- րակեր են, նրանց բնակարանները անմաքուր և անկարգ են:

Եթէ բոլոր հայերին հաշուենք, որոնք բնակ-

«Արարատեան ընկերութեան» գործունէու- թիւնը մեծ համակրութիւն է յառաջաց- նում մեր երիտասարդութեան մէջ, որի թիւը տարաբաղաւոր չափ սակաւ է: Ողջել մի այդ տեսակ ընկերութեան պարտաւոր է մեղանից իւրաքանչիւրը, բայց ինչ անել դիմել հասարա- կութեանը նուէրներ հաւաքելու համարեա անկարելի է, որովհետեւ մենք ուրախանում ենք երբ տաճկահպատակ մեր եղբայրները յառաջ են գնում, մենք ուրախանում էինք երբ հայ չէրնո- գորցիները Զէյթունիցիք յաղթութիւններ էին անում, իսկ այժմ որ նրանք յաղթված են մենք ափսոսում ենք, տրտմում ենք, բայց աւելի ո- չինք: Մենք կը կամենայինք հային ինքնավարու- թիւն Տաճկաստանում, ամեն տեսակ բարօրու- թիւն, բայց եթէ այդ բոլորի համար մեղա- նից փողեր պահանջեն, մենք զրոյ չէինք տալ:

Սրանից յայտնվում է որ մենք արեւակից չարաշարունքներից, ազգայնութեան գաղափարից վեր ենք դասում փողը, մենք նրան աստուա- ծացրել ենք. նրանից բաժանվել համայնա- ն է մահի: 1876 թիւն թիւրք—սերբական պատերազմի միջոցին ռուս հասարակութեան ամեն մի դասակարգը սկսած ամենահարուստ մեծատնից մինչև յետին ռամիկը համակրում էին սերբերին և այդ համակրութիւնը մեզ պէս միայն խօսքով չէր այլ գործով: Եւ յիշում եմ որ մի լրագրում կարդացած եմ թէ ինչպէս Տալա (Тала) քաղաքի գործարաններում աշխատող մշակները իրանց աղքատիկ վարձից մի բաժին էին հանում յօգուտ սերբերի և ամէս ամիս ու- ղարկում Զինք յիշում հարուստներին, որոնք հա- րիւր հազար բուրձով էին նուէրներ անում, չենք յիշում և փափկասուն տիկնանցը և օրիորդ- ներին որոնք վրաւորութիւնների համար կորպուս- ներ էին պատրաստում. չենք յիշում և այն կա- մաւորներին որոնք իրանց արհեստ թափում էին սերբիական անկախութեան համար: Սրբազան Խորեն Նար-պէյը Մոսկովայում առաջարկել էր, ինչպէս յայտնի է «Մշակ» ընթերցողներին— նրան առաջարկած դուռները նուրիչ յօգուտ զէյթունցիներին: Սրբան մենք յիշում ենք թիֆ- լիսից միայն մի նամակ կար որի մէջ պ. Նա- մակազիբը առաջարկում էր այդ նպատակի հա- մար նուիրատուութիւններ բանալ, բայց դժբաղ- ղաբար դա արձագանք չը գտաւ հասարակութեան մէջ: Այժմ մեզ առաջարկում են նուէրներ տալ յօգուտ «Արարատեան ընկերութեան»: Ինչպէս յիշեցի հասարակութեան միայն մի փառքութիւ- մասը կարող է նուիրատուութիւններ անել և ես այն կարծիքի եմ որ իսկ կը լինի եթէ մեր հայ երիտասարդները ժամանակ առ ժամանակ ներկայացուցնեն տային յօգուտ յիշեալ ընկերու- թեան:

Ես իմ կողմից կաշխատեմ մի և նոյնը իրադո- ծել այստեղ, մասնաւորապէս որ ներկայացուցնե- րաւոր գիտաւորութիւնը վաղուց է որ ունենցի- բայց մեր մէջ մտադրութենից մինչև իրադո- ծութիւնը մեծ հեռաւորութիւն կայ: Այնու ա- մենայնի հարկաւոր է աշխատել և աշխատել անխնայ և միաբան սիրով: Գրանով միայն մենք

վում են փոքր-Ասիայի, Պարսկաստանի և Կով- կասի մէջ տեղ և փոքր ի շատէ խիտ են բնակ- վում, նրանց թիւը կը հասնի երեք միլիօնի: Մի քանիսներ կարծում են որ մի միլիօնից աւելի չը կայ, իսկ իրանք հայերը հաշուում են իրանց թիւը մինչև հինգ միլիօն: Բայց եթէ աչքի ա- ռաջն առնենք հայոց բնակութիւնների բաղմու- թիւնը, ընդարձակ գետին, որի վրա նրանք տա- րածված են, նոյնպէս հայերի մէջ հասակ առած- ների և ծերերի բաղմութիւնը,—որովհետեւ հա- յերը սովորութիւն ունեն երկրորդ ապրելու,— որոնք մի խրճիթում միասին են ապրում, այն ժամանակ կարելի է ընդունել որ հայերի ընդ- հանուր թիւը կը հասնի երեք միլիօնի:

Հայերի վայրը երևում է Կ. Պօլսում և նրա շրջակայքում: Այստեղ նրանք գերազանցում են մինչև անգամ յոռնական հին կապիտալիստներին: Բոսֆորի մօտ է գտնվում ամբողջ Առաջաւոր- Ասիայի և Բալկանեան երկրների համար փողի մեծ վաճառանոցը, ուրաջը հոսում են ամեն տեսակ զրաւմեր, իսկ փողի և փոխանակութեան գործերի մէջ հայը գգում է իրան ինչպէս ձուկը ջրի մէջ: Կ. Պօլսում բնակվում են 200,000 հա- յեր:

Այստեղ հեղինակը մի առ մի հաշուում է թէ ինչ պարագլուծներով են զբաղվում հայերը Կ. Պօլսում և աւելացնում է «Թիւրքը այնքան ուրախութեամբ յոյնի հետ գործ չէ բռնում, որքան քաղով և գաղտնապահ հայի հետ և չը կայ թիւրքերի մէջ, թէ Կ. Պօլսում և թէ ուրիշ մեծ

կարող կը լինեն յաղթել արգելքներին: Կար- ծում եմ որ իմ յայտնած մտքերին համամիտ են մեր երիտասարդներից շատերը:

ՆԱՍԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս 2 յունվարի

Պատահամա ձեռքս ընկնելով պ. Յարոյի հրատարակած երկու բրօշուրները, միշտ ուղղված «Մշակ» խմբագիր պ. Արծրունուն, և միւսը իբրեւ ընտելութիւն Ռուսաստանի հայ մամուլի վրա, ես սկսեցի ուշադրութեամբ կարգաւ երկուսն ևս: Յաւ է ինձ ասել, որ առաջին բրօշուրը շատ վատ տպաւորութիւն գործեց իմ վրա, այո, մի ցաւալի տպաւորութիւն, որովհետեւ այդ բրօշուրը միայն անարգանք կարող է լինել հայ գրակա- նութեան և իրան պ. հեղինակին: Արդե՞ծք մօտ է այն երանաւէտ ժամանակը, երբ հայ գրակա- նութիւնից օրիորդ անհետանայ հայհոյական միա- տեմը: Ես պատկ. չունեմ ճանաչելու պ. Յա- րոյին, բայց կարգաւ պարտի գեղեցիկ նա- մակները, որ նա գրում էր փարիզից, ես հեղի- նակի վրտ մի լաւ գաղափար էի կաղմել: Ես ուրախ էի, որ պ. Յարոն ծանր հալեացք ունէր կեանքի վրա և չէր նմանում մեր մի քանի թե- թեմամիտ երիտասարդներին: Գեռ նորեւումս, երբ պ. Տէր-Գրիգորեան «Մշակ» մէջ պարտի մասին ասել էր թէ «չէ երևում որ մի բան սո- վորած լինի», ես պատրաստ էի կարծել, որ պ. Տէր- Գրիգորեան զրպարտում է պ. Յարոյին, Գրաբողբաբը, եւ չուտով ստիպելուց փոխել իմ կարծիքը: Պ. Յարոյ իր (առ. պ. Արծրունին) ուղղած բրօշուրով ոչ թէ միայն չէ հերքում Տէր- Գրիգորեանի ասածը, այլ ևս առաւել հաստա- տում է նրան, որովհետեւ անկարելի է, որ մի երիտասարդ, այնքան ժամանակ Ֆրանսիայի լու- սաւոր մայրաքաղաքում մնացած, եթէ այնտեղ մի բան սովորած լինէր, այնպիսի հայհոյական գրչով զրականական ասպարէզը դուրս գար: Պ. Յարոն անշուշտ կարդացել է Ֆրանսիական լրա- գիրներ. արդ, ո՞ր մէկի մէջ տեսած է նա որ մարդիկ, մասնաւորապէս կրթական մէջ աշխա- տողներ, միմեանց հրապարակաբար այդ աստի- ճան հայհոյելու լինեն... պ. Տէր-Գրիգորեան ծա- ռայ է, անգայ է, տգէտ է, իմաստուն է, ամ ինչ- է), կամ մի երեւելի անձ է,—այդ ինչ յարաբե- րութիւն ունի գործի հետ: Ապացուցեք, եթէ կարող էք, փաստերով առանց կրքի, առանց ինսուլտութեան թէ պ. Տէր-Գրիգորեանի ձեռ- մասին ասածը զրպարտութիւն է և չար նա- խանձի ծնունդ, եթէ ոչ ինչի մէջ չը կարծենք, որ պ. Տէր-Գրիգորեան ձեռ իբրեւ օրինակ է բե- րել իրան արքայազններու համար, այսինքն հա- տատելու, որ երբեմն կարելի է առանց բարձր գասարանների ևս կրթվել և զարգանալ: Տէր- Գրիգորեանի ծառայ կամ աղայ, գիտնա- կան կամ անգէտ, պ. Արծրունու նախանձոտ,

քաղաքներում, ոչ մի ունեւոր տուն, որ չունե- նար իր հայ ծառաներ, կամ իր հայ գործակա- տարին: Ամեն տեղ հայը հմուտ և ճարպիկ դո- ծակատար է, որին երբեք չէ կարելի դուրս բե- րել իր հանգարտ հողու տրամադրութենից և հաւասարակշռութենից, բայց որ գաղտնի կե- րպով ամենքի գրպանները և ամենքի սրտերը իր սուր աչքով թափանցում է»:

Հեղինակը յայտնում է թէ իր կարծիքով որքան հայեր պէտք է լինեն թէ եւրոպական թիւրքիայում և թէ թիւրքիայի ասիական նա- հանգներում, Հայաստանից դուրս, յետոյ խօ- սում է Ռուսաստանի հայերի թիւի և նրանց պարագլուծների մասին, յիշում է արեւմտեան հայերի և Պարսկաստանի հայերի թիւը:

Այս թւերը երևում են մեզ շատ անճիշդ: Ուրեմն, աւելացնում է յօդուածագիրը, աւելի քան թէ չորրորդ մասը ամբողջ ազգի, մի մի- լիօնից աւելի ցրված է ամբողջ աշխարհում: Այդ փաստը լսելով ամեն մարդ ակամայ մտածում է հրէաների և բօշաների մասին: Բայց մեծ զա- նաղանութիւն կայ սրանց և հայերի մէջ: Բօշանե- րի թափառական յատկութիւնից մի նշույլ էլ չը կայ հայերի մէջ, ընդհակառակն հայը ծանր է և ստատիկ կապվում է այն հողի հետ, որտեղ նա գաղթել է և որի վրա նա մի անգամ սկսել է նստողական կեանք վարել: Հայը չենթարկ- վեց նոյնպէս վիճակի այն հաղածանքներին, որոնց ենթարկվեցան հրէաները և որոնց չնոր- հով այդ վերջինները աքսորվեցան իրանց հայ-

սեանդի կամ սպիտակահողի լինելովը ոչինչ չէք հաստատում, ձեռք էք նուստացնում և ոչ ուրիշ: Մենք ամենին մտադիր չենք պ. Տէր- Գրիգորեանին պաշտպան հանդիսանալ, ոչ գուցէ, յիշաւ, նա զրպարտում է ձեռ, գուցէ նա ոչինչ չը գիտէ, բայց այդ դուք պէտք է ա- պացուցանեք: Մեր դարը մաթեմատիկական դար է. առանց ապացոյցի ոչինչ չէ ընդունվում: Մինչև երբ պէտք է մենք չը հասկանանք, որ կարելի չէ և անհերքելի է անձնական հայեանքը, անձնական յարաբերութիւնները գրականական գործերի հետ խառնել: Մեզ համար նշանակութիւն ունի պ. Արծրունու ոչ թէ մասնաւոր կեանքը, մասնաւոր գործունէութիւնը, այլ նրա հասա- րակական և ազգային գործունէութիւնը. մեզ համար մեծ նշանակութիւն ունի ոչ այն, թէ ինչ տեսակ բնաւորութեան տէր է պ. Արծրու- նին իր մասնաւոր կեանքի մէջ, այլ թէ նրա գործունէութիւնը ազգի համար որքան օգտա-ւէտ է եղել, կամ վնասակար: Նոյնը և պ. Տէր- Գրիգորեանի մասին:

Գալով երկրորդ բրօշուրին, պէտք է ասել, որ առաջին մասը պ. հեղինակը բարեխղճաբար է գրել, բայց հէնց որ հասնում է «Մշակին» իսկոյն դարձեալ երևում է կրք և կողմնապահ ոգի: Չը նայելով այդ խոշոր պակասութեան, ես չեմ կա- րող չը համաձայնել բրօշուրի մէջ յայտնած մի քանի մտքերի հետ: Բայց զորա մասին գուցէ մի ուրիշ անգամ:

Մի խօսք ևս: Յայտնի է, որ պ. Յարոյի փա- րիզի նամակները բաւական գեղեցիկ լեզուով էին գրվում, այնպէս որ մարդը առանց ձանձ- րանալու կարգում էր այդ նամակները: Բայց պարտի բրօշուրների լեզուն ահաղին տարբերու- թիւն ունի այն նամակների լեզուի հետ: Չը լի- նի թէ թէ պ. Յարոն Ֆրանսիայից թիֆլիս վե- րադառնալով մոռացել է հայերէն լեզուն, այն- սինքն այն անորոշելի բարբառը, որով նա փա- րիզից գրում էր... Յանկալի էր, որ այս տարա- կուսանք լինը պ. Յարոն լուծէր:

Հ. Առաքելեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Այս տարի «Մշակ» բաժանորդագրութիւնը շատ լաւ է գնում: Գաւառական գրեթէ իւրա- քանչիւր քաղաքում աւելի շատ ստորագրողներ ունենք քան թէ անցեալ տարիներում: Միայն Նուխի և Շամախի քաղաքները, ինչպէս եօթ տարի շարունակ, միտ մեռած և անտարբեր են մնում: Այնտեղ անկարելի է աւելացնել բաժա- նորդների թիւը. երևում է որ այդ երկու քա- ղաքների մէջ բոլորովին կեանք չը կայ: Բայց թիֆլիսի մէջ մեր լուսաւորված թիֆլիսը նոյն- պէս շատ հեռու չէ գնացել այդ երկու քաղաք- ներից: Թիֆլիսում աւելի ստորագրող չունենք քան թէ անցեալ տարիներում: Եւ գիտե՞ք ով- քեր են ամենաանտարբերները զէպի հայոց լը-

րներեցի: Հայոց ազգի ամենանշանաւոր մասը դեռ ևս ապրում է իր հայրենիքում, և հայ գաղ- թականները կամաւոր կերպով էին թողնում ի- րանց հայրենիքը կամ կարիքից և ճնշումից դը- րված, կամ որովհետեւ նրանց հայրենակիցները, որոնք գահ էին լինում օտարութեան մէջ, կան- չում էին նրանց:

Ընդարձակ վաճառականութիւն հայերի ձեռ- քում է, բայց որտեղ է մնում ամբողջ ստա- ցած փողը,—կարելի է կարծել որ հայը խնա- վում է իր հարստութիւնը նշանակելով նրան իր ազգի պապագայի համար: Այն անգին փողերից որ հայը իր ձեռքն է գցում, կրկին երևան է գալիս նրանցից միայն մի մաս: Այն ինչ որ հայը գործ է ածում իր կեանքի բարօրութեան, իր ընտանիքի կանանց սեռի զարգացանքների,— հայը սիրում է գոհարեղէնները,— և վերջապէս ուսումնարանների և ազգային հիմնարկութիւն- ների վրա:

Հայը չէ սիրում շարունակում է հեղինակը, հրէայի պէս վտանգ ներկայացնող փողի գոր- ծերը, նա չէ սիրում իր գիղված գումարը կրկին խաղի մէջ դնել: Շատ դժուար լինելով, հայը չէ սիրում այնպիսի գործեր, որոնց ընթացքը առա- ջուց չէ կարելի սառը և պարզ հաշիւն ենթար- կել:

(Կը շարունակվի)

8 U 8 S U R U R O T P T T T T T

MAISON DE COMMISSION
et d'exportation
NICOLAS AMIRAGOFF ET C^o
16, Rue de la Grange-Batelière
PARIS

Կոմիտեի անունի վրա
Կոմիտեի անունի վրա
Կոմիտեի անունի վրա

ԳՐԻԳՈՐ ՆԱՍԻՐԵԱՆԻ
ՊԵՏԵՐՍԲՈՐԳԻ ԶԵՆՈՒՄՆԵՐԻ
Ի ԼԵՆԻՆԻՆԻՍԿԻ ԵՐԵՒԵՆԵՐԻ
ՆԱԵՆ ԶԵՆՈՒՄՆԵՐԻ ՎՐԱ

ստացվել են մեծ քանակությամբ ԵՐԵՒԵՆԻ
ՏՐԻԿՈՒՆԻ ՍԻՆԹԵՏԻԿԱՆԵՐԻ ՇՈՐՔԵՐ, որոնցով
ԱՌԱՌՈՏԱՆ ԺՕՎՍԵՆՆԵՐ, ձևավորված ՊԱՆՏՈՆԻՆԻ
ՎԱՐՏԻԿԱՆԵՐ, ԵՐԵՒԵՆԻ ԶԱՊԵՐԱՆԵՐ, ՎԵՐՈՒՐԱԿՈՒՆԻ
ԻՄԱՆՍԵՐ զարդերով, նոյնպես ըն-
դունված են ՊԱՏՈՒՆԵՐՆԵՐ զննարանի և
քաղաքական Զապուստների համար Թոյս ու-
նեմ, որ նոյնպես պատահողները նոյնպես է
զննարանը ԲԱՐՈՒՄԱՆ ԿԸ ՄԱՆԱ:

32—75

Մանուկ տակից դուրս եկաւ և վաճառ-
վում է Կամար տէր-Կամարի ՐՍԿՈՅ
ՇՈՎՈ — նոր դասագիրք ուսուցիչի լիզուի,
Հայ դպրոցների համար, երկրորդ տպագրու-
թիւն, նորանոր օգտագործման և փոփոխու-
թիւններով լրացրած: Այս գիրքը հաճու-
թեամբ պ. Թեմական վերատեսչի ընդունված
է Կրասնոյս և Իմերեթի վիճակի հայոց
բոլոր միջնակարգ և ծրական ուսումնարան-
ներում: Սա ընդունված է նոյնպես Կովկասի
և միւս Թեմերի ուսումնարաններին շատե-
րում: Վաճառվում է Թիֆլիսում բոլոր գրա-
վաճառանոցներում: Կարող են տանալ և
աշխատանքով կարող են Երեւանի մա-
գաղանում, Միկայիլովսկոյ կամուրջի վրա,
զինն է 10 կոպէի: Զանազան հիմար առ-
նորներին վրա է: Գումարով առնողներին մեծ
զեղչում կը լինի եթէ զինն ուղղակի աշ-
խատանքով չհաճանայ հասցէով:

Թիֆլիս. Կամար Թեր-Դաւիթանց:
Եւ մագազին Թ. Աճաւանց, Եւ Մի-
խայլովսկոյ մոստու:

РАСПРОДАЖА
БЕЗ ЗАПРОСА.

По случаю прекращения розничной
торговли и открытия оптового склада,
назначается распродажа по самым де-
шевым ценам, на 25% дешевле обы-
кновенных цен, товаров: крепь, ар-
дагань, матлазе, репсы, фый, карсы, кь-
руасы, кашемир, черныи отъ 75 к. до
2 р. 30 к. альпага черныи отъ 35 к. до
75 к. шали суконныи отъ 3 р. 25 к. до
7 р. 35 к., ковры бархатныи, тикъ хол-
щевый, рубашки полотняныи, и т. п. Въ
каравансараѣ Тамашева, верхній этажъ,
противъ гостиницы Кавказъ, №№ 10 и 11
магазинъ Малакова.

3—4

ԳԵՂԱՐՈՒՆԱՍԵՆԿԱՆ
ՀԱՆՈՒՄ

որ գտնվում էր Գոյվիսակի պրոսպեկտի վրա
Սարաջովի տանը, այժմ գտնվում է նոյն ԳՕ-
ԼՕՎԻՆՍԿԻ պրոսպեկտի վրա, Շիճեվի տանը,
Գերմանական կրթի և Վեդլիի ֆոտոգրա-
ֆիայի մոտ մի և նոյն սանդուղքով Այցե-
ոյնների համար բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտան
9 ժամից մինչև երեկոյան 5 ժամը: Հաւա-
քածուին ՆՈՐ ՆԿԱՐՆԵՐ են աւելացրած:

24—25

ԹԻՖԼԻՍ Հիւրանոցում Գր-
վորցոյս փողոցի վրա, Սարա-
ջովի տան պատրաստվում են
ԵՂԵՆԵՐ յոննալարի 17-ից առա-
ւօտան 1 ժամից մինչև երեկո-
յան 4 ժամը: Մուտքը բազից է:

1—4

ДЪВИЦА ищетъ мѣсто КОМПА-
НІОНКИ или ГУВЕРНАНТКИ. Адресъ:
Старокатолическая улица, домъ Чико-
вана № 10

ՄԷԼ ՕՐԻՈՐԻ ցանկանում է ընկերացուհու
կամ ՏՆԱՅԻՆ ՎԱՐՃՈՒՆՈՐ պաշտօն ունենալ:
Հասցէ, Ստարոկատոլիկական փողոց, տուն
Չիկովանի, № 10

КОНТОРА ГАЛЕРЕИ АРЦРУНИ
ОТКРЫТА КАЖДЫЙ ДЕНЬ КРОМѢ ВОСКРЕСНЫХЪ
ДНЕЙ отъ 9 часовъ утра до 2 часовъ пополудни

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԴԱՐՈՒՆԻ ԴԱՐԱՆԵՆԵՐԸ

ԲԱՏ Է ԵՄԵՆ ՕՐ ԱՌԱՎՈՏԱՆԸ 9 ժամից մինչև 2 ժամ:
Կեսօրից յետոյ բացի ԿԻՐԱԿԻ օրերից:

МАГАЗИНЫ ОТДАЮТСЯ ВЪ НАЕМЪ
ПО ОЧЕНЬ ДЕШЕВЫМЪ ЦѢНАМЪ
ВЪ ГАЛЕРЕѢ АРЦРУНИ.

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԴԱՐՈՒՆԻ
ՀԱՏ ԷՃԱՆ ԳՆԵՐՈՎ ՎԱՐՁՈՎ ԵՆ ՏՐՎՈՒՄ
ԽԱՆՈՒԹՆԵՐԸ

ՔԱՐԵՏՈՒԹՅՈՒՆ „ԹՈՒՄԱՍՏԱՆ“ ՀԱՆՈՒՄ

(ՀԱՆՔԻՑ) ՈՐ ԳՏԵՎՈՒՄ Է ԶԷԼՈՒՄՆԻ ԱՐՈՒՐՁԱՆԻ ԿՈՒՐՍԵՐԱ
ԳԻՒԼ ԻՄ

ԸՆԿ. ՆԵՅՄԱՆ — ՀԷՆԻՆԳ

Ծախվում է ՇԷՅՆԵՆԳԻ ՊՎԻԼԻՍԵՆՈՒՄ ՄԵՐ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ
ՄԻԱՍԻՆ ԱՄԲՈՂՔ ՎԱԳՈՆԵՐՈՎ ԵՐԿԱՌՈՒՂՈՒ ԿԱՅԱՐԱՆԻՑ ՊՈՒ-
ԴԸ 25 ԿՈՊ., ԻՍԿ ՓՈՔԸ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԿԱՐԵԼԻ Է ԳՆԵԼ ՔԱԼԱՔԻ
ՄԷՋ ԳՏԵՎՈՂ ՊԱՆԵՍՏԻՑ ՊՈՒԴԸ 28 ԿՈՊԷԿՈՎ:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷՋ
ԵՒ
ՏԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ

Աշակերտների և աշակերտուհիների ընդունութիւնը սկսած յունվարի 8-ին 1879
թուականի:
Մանկական պարտէզը ընդունվում են մանուկներ, երկու տարի էլ և-ից մինչև 7 տա-
րեկան հասակը, իսկ տարրական դպրոցը 7-ից — 12 տարեկանները:
Ուսման ընթացքը յարմարեցրած է միւս դպրոցների ընթացքին, այնպէս որ դպրո-
ցում աւարտողները կարող են մանկ աղայք տղայոց և աղջկանք օրորոցաց դպրոցի առա-
ջին դասաւանդները:
Պարտէզի ու դպրոցը գտնվում են Վերամիսովսկի փողոցում Եւլան Ն. Ամատուեու
տանը. № — 11:

ՅՈՒՆՎԱՐԻ 30				ՏԵՂԵԿԱՆՈՑՑ				ԹԻՖԼԻՍ, 1879			
ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ		Բ.		ՀԻՄՆԱԳԻՐ		ՓՈԹԻ-ԹԻՖԼԻՍԻՆԵՐ ԵՐԿԱՆ		ՓՈՍՏ		ԲՈՇԿԱՆՈՑ	
(Յունվարի 29-ին)						ԹԻՖԼԻՍԻ ԴԻՆԵ ԳՕԹԻ				«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՌԱՆԵՐԸ	
Ուկրին (պորտուգալական)		8 53		Կովկասի և Ան-		Թիֆլիսից մինչև ԳՕԹԻ		Ամեն տեսակ թէ նա-		Հիւանդների ընդունելու-	
Հին 82 պր. մ. արծ. 1000 մ.		1630		դրկովկասի քա-		(ճանապարհորդների գնացքը) 9		մակներ, թէ լրագրիներ և		թիւնը ժամը 9-ից մինչև 1	
Հին 20 Գ. 72 պր. 1000		1320		ղաքները		ժամին 21 րոպէ առաւօտան:		թէ ծանր փոստ ամեն տեղ		ժամը կեսօրից յետոյ:	
Վերջինի 50 Գ. առաջի փո-		233		Ռուսաստան		Մինչև Միխայլովսկո (խառն		ուղարկելու, ընդունվում		Երկու շաբաթի. Լիւի-	
խառնութեան տոմ. 100		239		Աւստրիա		գնացքը) երեկոյան 5 ժամ. 13		են ամեն օր, առաւօտան		ցիւլ և Գորայից ներքին	
Երկրորդ 50 Գ. վերջինի		229		Անգլիա		ժամից մինչև 1 և կեսօրից		8 ժամից մինչև 1 և կեսօրից		հիւանդութիւններ, Բակու	
Մարտիկի արքայ 245		100		Գերմանիա		յետոյ 3 ժամից մինչև 7		Իսկ կիրակի օրերը հասա-		վենեական և կաշու հ.	
Հոգնութիւն Թիֆլիսի		10 30		Ֆրանսիա		Իսկ կիրակի օրերը հասա-		թակ նամակներ մինչև 10		Քուշարեանց վիրաւորա-	
Վրացի կուրոր ածէ 121 Գ.		100		Յունաստան		թակ նամակներ մինչև 10		ժամ առաւօտան և 3—7		կան և կանանց հիւան-	
Գարեջուր բարաթը		5 80		Անգլիականները ընդ ու-		Երեկոյան:		Երեկոյան տանից և		դուքիւններ:	
Առնարական բանի ա-		315		նեկութիւնը ցերեկայ		Որ տասնամյակից և		Որ տասնամյակից և		Երեկոյան տանից և	
ջրան 200 մ.		102		նեկութիւնը ցերեկայ		փոստը ստացվում է Թիֆ-		Փոստը ստացվում է Թիֆ-		Փոստը ստացվում է Թիֆ-	
Փոթի Թիֆլիսի երկա-		7 40		նեկութիւնը ցերեկայ		լիսում ամեն օր: Բա-		լիսում ամեն օր: Բա-		լիսում ամեն օր: Բա-	
թուղու ակցիան 125 մ.		7 30		նեկութիւնը ցերեկայ		զոռի տրակտից երե-		զոռի տրակտից երե-		զոռի տրակտից երե-	
Շաբաթը բոլորը		6 80		նեկութիւնը ցերեկայ		քաբի և շաբաթ օրերը:		քաբի և շաբաթ օրերը:		քաբի և շաբաթ օրերը:	
միւս տեսակը		12		նեկութիւնը ցերեկայ		Երեկոյան տրակտից եր-		Երեկոյան տրակտից եր-		Երեկոյան տրակտից եր-	
շաբաթաւոր		7 40		նեկութիւնը ցերեկայ		կուշաբից, հինգշաբթի և		կուշաբից, հինգշաբթի և		կուշաբից, հինգշաբթի և	
արանդիւր		6 70		նեկութիւնը ցերեկայ		շաբաթի, ֆոթի-թիֆ-		շաբաթի, ֆոթի-թիֆ-		շաբաթի, ֆոթի-թիֆ-	
մաքուր վաճառ		8		նեկութիւնը ցերեկայ		լիսում ամեն օր: Բա-		լիսում ամեն օր: Բա-		լիսում ամեն օր: Բա-	
Բաժնեկր Ներսիսի Ա-		4 10		նեկութիւնը ցերեկայ		զոռի տրակտից երե-		զոռի տրակտից երե-		զոռի տրակտից երե-	
մերկայի երեկոյան		1 80		նեկութիւնը ցերեկայ		քաբի և շաբաթ օրերը:		քաբի և շաբաթ օրերը:		քաբի և շաբաթ օրերը:	
Միւս տեսակը հին սերմից		1 30		նեկութիւնը ցերեկայ		Երեկոյան տրակտից եր-		Երեկոյան տրակտից եր-		Երեկոյան տրակտից եր-	
Բոլորը թիֆլի		12 60		նեկութիւնը ցերեկայ		կուշաբից, հինգշաբթի և		կուշաբից, հինգշաբթի և		կուշաբից, հինգշաբթի և	
Աւելի Երազայու		190		նեկութիւնը ցերեկայ		շաբաթի, ֆոթի-թիֆ-		շաբաթի, ֆոթի-թիֆ-		շաբաթի, ֆոթի-թիֆ-	
Երեկոյան		140		նեկութիւնը ցերեկայ		լիսում ամեն օր: Բա-		լիսում ամեն օր: Բա-		լիսում ամեն օր: Բա-	
Գարին		40		նեկութիւնը ցերեկայ		զոռի տրակտից երե-		զոռի տրակտից երե-		զոռի տրակտից երե-	
Մուր բնաճարի (счап.)		55		նեկութիւնը ցերեկայ		քաբի և շաբաթ օրերը:		քաբի և շաբաթ օրերը:		քաբի և շաբաթ օրերը:	
Մեծաքա Նուրայ		27		նեկութիւնը ցերեկայ		Երեկոյան տրակտից եր-		Երեկոյան տրակտից եր-		Երեկոյան տրակտից եր-	
Կարիսի Գ.		23		նեկութիւնը ցերեկայ		կուշաբից, հինգշաբթի և		կուշաբից, հինգշաբթի և		կուշաբից, հինգշաբթի և	
Մեծաքա Նուրայ		18		նեկութիւնը ցերեկայ		շաբաթի, ֆոթի-թիֆ-		շաբաթի, ֆոթի-թիֆ-		շաբաթի, ֆոթի-թիֆ-	
Կարիսի Գ.		18		նեկութիւնը ցերեկայ		լիսում ամեն օր: Բա-		լիսում ամեն օր: Բա-		լիսում ամեն օր: Բա-	